# ԵՂԻՇԷԻ ՁՈՐՍ ՅԵՂԱՆԱԿՆԵՐ

## ՀՆԱԳՈՅՆ ԳՐՉԱԳՐԻ ՄԸ ՄԷՋ

*Ս. Ղազարու մեր Ձեռագրատան մէջ ունինք 1224ին գրուած մեծադիր, երկսիւնեան ստուար ճառընտիր մը, որ գրուած կը յիշուի Թադէոս անուն գրչէ մը «ի դամբարանս Սուրբ Լուսաւորչիս»։*

*Այս ճառընտրին մէջ շատ մը վկայաբանութիւններէ վերջ դրուած գտանք նաև Եղիշէի Վարդանանց Պատերազմի պատմութենէն այն Չորս Յեղանակները՝ ուր կը պատմուին մեր նախնի աշխարհիկ և եկեղեցական դասակարգին կրած տառապանքն ու մարտիրոսացումը։ Օրինակութեանս ժամանակին քննութիւնը շատ հետաքրքրեց զմեզ, մանաւանդ երբ տեսանք – բացի ցանցառ աղաւաղումներէ և սպրդած սխալներէ – ընտիր և ճշգրիտ տարբերութիւններ, որոնք լուրջ ուսումնասիրութեամբ մը կրնան օգտակար ըլլալ Եղիշէի ապագայ նոր տպագրութեանց, քանի որ սոյն տարբերութիւնները չկան նոյն իսկ ցարդ եղած տպագիր օրինակներուն մէջ։*

*Այդ նպատակաւ անհա մեր առաջին* (1828) *տպագրութեան հետ բաղդատելէ վերջ, դէմ առ դէմ ի լոյս կ'ընծայենք այն ամէն բառերն ու երբեմն նոյն իսկ գիր մը, որոնք տարբերութեան փոքրիկ նմոյշ մը կը կրեն։ Ուստի կը յուսանք՝ որ մեր հայ բանասիրաց մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ ըլլալով, պիտի պարզուին թէ երկու լաւերէն կամ լաւագոյններէն ո՞րն է հարազատը կամ ի՞նչ կը պակսէր ցարդ մթին մեկնուած տեղերուն մէջ, և այլն. որով կարելի պիտի ըլլայ ապագայ տպագրութիւններն աւելի իրենց նախնականին մերձեցնել քան ինչ որ էին ցարդ։ Ըստ բաւականի ամբողջական պիտի ըլլար բարեփոխութիւնը՝ թէ որ գտնուէին մնացած Յեղանակներն ալ՝ գոնէ ուրիշ տեղ մը։*

*Մենք պարզապէս ի դիւրութիւն բանասիրաց ուսումնասիրութեան և ի լուսաբանութիւն գրչագրիս, ու միշտ նկատելով Եղիշէի ապագայ տպագրութեան մը համար օգտակարութիւնն ալ, բաղդատեցինք սոյն Գրչագիրը մի քանի ուրիշ օրինակներու հետ ևս, ընտրելով հիներէն և լաւագոյններէն, որոնց համաձայն կամ անհամաձայն գտնուելէն պիտի հասկցուի և գուշակուի նաև՝ թէ սոյնպիսի տպագրի մը նախնական ձեռագիր օրինակը ինչ դարու պատկանած է։*

*Աւելի որոշ գաղափար մը տուած պիտի ըլլանք բանասիրաց մեր Գրչագրին վրայօք՝ հակիրճ տեղեկութիւններ մը դնելով իւրաքանչիւր Օրինակներնուս վրայ։ Գրչագրէն դուրս Օրինակները եօթն են, զորս՝ հնութեան կարգաւ՝ Ա. Բ. Գ. ևն. տառերով թուած ենք էն վերջը։*

*Առաջին տեղը տուած ենք Հ. Յ. Աստուրեանի հրատարակած պատառիկներուն,* (*Տես Բզմվէպ.* 1906 *Թ. Յունուար, Փետր. Մարտ*), *որոնք ամբողջ երեք մասեր են. ասոնց ընդհանուր վերնագիրն է «***Եղիշէի Պատմութեան Նորագիւտ Հատուածներ***»։ Յօդուածագիրը յԱսորիս և ի Կիլիկիա տեսած ձեռագիրները յիշատակած ատեն՝ այսպէս կը նկարագրէ իր Եղիշէի ձեռագիրը։*

*«Մարաշու մէջ տեսայ քանի մը աննշան ձեռագիրներ, որոց մէկուն կողքին ներսի կողմը գտայ Եղիշէէն կտորներ, որոնք ինձ ձեռագրէն աւելի յարգի թուեցան, և առանց մեծի դժուարութեան կրցայ ստանալ զանոնք. ինն կտոր թղթեր են, զորս իրարու քով բերելով՝ կ'ունենանք ութ էջ կամ չորս թուղթ, և կը բովանդակեն Եղիշէին Ա. Բ. Դ. և Ե. Յեղանակներէն հատուածներ։ Գրութիւնը* **երկաթագիր** *է, ամենահին* **թղթի** *վրայ. մեզ կը թուի թէ երկոտասաներորդ դարու գործ մ'է, թէ՛ գրի ձեւէն և թէ՛ թղթի հնութենէն հետեւցնելով։ Իւրաքանչիւր էջ երեք սիւներէ կը բաղկանայ, և իւրաքանչիւր սիւն* 35 *տողերէ. բայց մեր ձեռքի տակ ունեցած կտորներուն մէջ ամբողջովին կատարեալ թուղթ չունենալով, տողերու թիւը ձեռագրի վրայ եղած քննութեամբ հանեցինք։ Այս պակասաւոր վիճակին մէջ թղթերը ունին* 37 *հրդմ. երկայնք,* 28 *հրդմ. լայնք,* 5 *հրդմ. լուսանցք և* 10 *հրդմ. իւրաքանչիւր տողերու երկայն-*

digitised by A.R.A.R.@

քը․ իսկ ամբողջական ձեռագիրը ունեցած կը տեսնուի 52 երկայնք և 42 լայնք։ Լուսանցքի վրայ զարդանկարներ չկան․ տեղ մը միայն կարմիր և երկնագոյն ներկի հետքեր կը տեսնուին։ Մելանը տկար սեւ մելան է․ իսկ կարմիր գունով մէկ տող միայն կայ, թէեւ բազմաթիւ գլխագրերն եւս նոյն գունով կրնային գրուիլ»։

Հ․ Աստուրեանի այդ կարծեաց համեմատ՝ իր ձեռագիրը գրեթէ ժամանակակից պիտի գտնենք մերինին, որ ինչպէս յետոյ բաղդատութիւնն ալ ցուցուց մեզ՝ ամենէն աւելի համաձայնը ինքն է։ Բայց այս հատուկտորները շատ քիչ ծառայեցին մեզ, վասն զի ամբողջը մեր չորս Ցեղանակներէն չէին։ Ուստի կրցանք ծառայեցնել մեզ Մարտի «Բզմվպ»ին մէջի մի քանի զանազան կտորները միայն։

Երկրորդը 1207ի (Թ. Ք) ձեռագրէ մը հանուած է, մանաւանդ թէ ամբողջական փոխադրութիւն է Կ. Պոլիս տպուած 1764ի Եղիշէի հրատարակութեան մը վրայ։ Տպագրիս առաջին կողքին ներքին երեսը՝ թղթիկի մը վրայ հետեւեալն ունի․ **«Ջայս Պատմագիր Եղիշայի բաղդատութեամբ ուղղագրեալ ըստ ընտիր ձեռագրի միոյ, գրելոյ յարարատեան աշխարհի ի թուին ՌԾՁ, տառքեաց ու մեզ տիրացու գէորգն տէր յօհաննիսեան, յամին 1783, ի սեպտ․»**։ Տպագրին այն մասերը որ չեն համաձայնած՝ աւրուած են, և ընդհանրապէս անոնց դիմաց լուսանցքին մէջ դրուած է ձեռագրին տարբերութիւնը, իսկ գրի պարզ փոփոխումը կատարուած է նոյն ինքն տպագրին վրայ․ և այս ամէնը՝ մաքուր կերպով։ Ուստի իրաւամբ զայս առանձին ձեռագիր մը նկատեցինք․ և թէպէտև մենք մեզի պէտք եղածն առինք, բայց ըսենք որ ամբողջութիւնը նոր տպագրութեան մ'առթիւ լաւ պիտի ծառայէ։ Աս ալ դնենք, որ որքան մաքուր և խիստ խնամոտ կ'երևի ձեռագրին փոխադրութիւնը, չենք կրնար երաշխաւորել դարձեալ փոխադրողին բացարձակ ճշդութեան վրայ։

Երրորդն է Կ. Պոլսոյ 1764ի տպագրութիւնը, որուն վրայ կատարուած էր վերնոյն փոխադրութիւնը։ Մենք քանի մ'օրինակ ունենալով այս տպագրութենէն՝ մաքուրներէն մին ընտրեցինք, որպէս զի մեր կողմանէ որ և է սխալի և շփոթութեան տեղի չտանք բաղդատութեանս պահուն։

Չորրորդը՝ Սանկտպեդրպուրկի 1787ի տպագրութիւնն է, որուն թղթերը գրեթէ մաշած են և սկիզբէն ալ 18 էջ կը պակսին, բայց ծառայեց մեզի ուր որ պէտք էր։

Հինգերորդը Կ. Պոլսոյ 1823ի տպագրութիւնն է․ աշխատասիրութիւն՝ Տ. Անդրէաս Վ.ի Նարինեան ակնեցւոյ։

Վեցերորդն է Թէոդոսիոյ 1861ի՝ ըստ Անձևացեաց օրինակին ա. տպագրութիւնը, հրատարակութեամբ Խորէն Վ. Գալֆայեանի։

Եօթներորդը՝ Վենետիկ 1902ին հրատարակուածն է, Փորթուգալ փաշայի քննադատութեամբ։

Իբր ութերորդ առինք ուրիշ մ'ալ։ Վենետկոյ 1838ի տպագրութիւնը, որ հրատարակուած է Եղիշէի մատենագրութեանց հետ, ունի ամէն էջի տակ զանազան պակասաւոր գրչագիրներու տարբերութիւնները։ Ուստի մեր Գրչագրէն հանուած այն ամէն բառերն ու տառերը՝ երբ 1838ի տպագրութեան էջերուն տակ տարբերութիւն կամ նմանութիւն մը տուին՝ նշանակեցինք զանոնք մեր բաղդատութեանց շարքին մէջ։

Այս զանազան Օրինակները Գրչագրիս հետ բաղդատած ատեննիս՝ բնական է թէ ոմանք շատ աւելի համաձայն գտնուեցան քան ուրիշները։ Ուստի ըստ համաձայնութեան կարգին այսպէս պէտք ենք շարել։ **1838ի տպ․ին տարբերութիւնները – Հ. Աստուրեանի Հրատարակած Հատակտորները – 1207ի ձեռագիրը – 1823 – 1764 – 1787 – 1861 և 1902 թուականներու տպագրութիւնքը**։ 1838ի տարբերութիւններէն ոմանք այն աստիճանի մերձաւոր երևցան, որ ի սկզբան կարծեցինք՝ թէ անոր Մխիթարեան Հրատարակիչը իր առջևն ունեցած ըլլայ նաև մեր այս Գրչագիրը․ սակայն յետոյ մեր ամբողջ բաղդատութեամբն անկարելի գտանք․ որովհետև թէ որ ունենար՝ պէտք էր նշանակած ըլլալ այն մի քանի էական մեծ տարբերութիւններն ալ, որ կան մեր Գրչագրին մէջ, մինչ ինքը բան մը չէ նշանակած ի ստորև, ինչպէս վերջը ընթացքին մէջն ալ պիտի տեսնենք։ Սակայն յամենայն դէպս հին թերի ձեռագիրներէ հանուած տարբերութիւններ ըլլալնին կ'երևի։

Թէ ինչպէս պէտք է հետևիլ մեր բաղդատութեանց շարքին ու ձևին՝ մի քանի լուսաբանական ծանօթութիւններ դնենք․

1․ – ա. Նոտրագիր դրած ենք մեր **Գրչագրին մէջ տարբերող ու յաւելուած բառերն ու տառերը**։ **բ.** Նոտրագիր են նոյնպէս **դիմացի տպագիր օրինակին մէջ անոնք՝ զորս չունի մեր Գրչագիրը**։ **գ.** Նոտրագիր են դարձեալ **ստորև բաղդատուած օրինակաց մէջ անոնք՝ որ համաձայն են մեր Գրչագրին**․ իսկ միւս գրերը Գրչագրէս տարբերողներն են։

2․ – Վարը՝ ուր որ փակագծեալ **Գլխատառեր** կը տեսնուին՝ պէտք է հասկնալ, թէ այդ մասերը նոյն են բաղդատութեանց շարքին մէջ՝ **մինչ** առաջին անգամ փոփոխութիւն կրող անոնցմով սկսող բառերուն հետ։

digitised by A.R.A.R.@

(տես զոր օրինակ ծանօթութեանց մէջ՝ Թ. 4. 9. և այլն)։

3. — Ուր որ և այն դրած ենք, կը ցուցնէ թէ անոնք նոյն են մեր Գրչագրին հետ։

4. — Ա. օր.ին մէջ պարապ տեղերուն մէջ գտնուած կէտերը անոր հրատարակիչէն դրուած են, զորս մենք ալ ճիշտ նոյնպէս դրած ենք՝ շփոթութիւն չհանելու համար։

5. — Ուր որ չենք յիշած Օրինակ մը՝ կը ցուցնէ թէ անիկայ նոյն է 1828ի տպագրին հետ, որ Գրչագրին դիմաց կը գտնուի։ Հետևաբար պարզապէս յիշուած Օրինակ մ'ալ առանց տարբերութիւն մ'ունենալու քովը՝ կը ցուցնէ Գրչագրին յար և նման ըլլալը։

6. — Այս [ ] փակագծին մէջ առած ենք մեր կողմանէ դրուած փոքրիկ դիտողութիւնքն ու խօսքերը, թողլով լուրջ ուսումնասիրական և ստուգաբանական մանրախոյզ քննութիւնը բանասէրներու ջանքին և Եղիշէի ապագայ հրատարակիչներուն։

### ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՁԵՌԱԳԻՐ ԵՒ ՏՊ. ՕՐԻՆԱԿԱՑ

Ա. . . Անթուականը.
Բ. . . 1207 Թուականինը.
Գ. . . 1764 »
Դ. . . 1787 »
Ե. . . 1823 »
Զ. . . 1861 »
Է. . . 1902 »
Ծ. . . 1838ի Տարբերութիւնքը.

## ՉՈՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

### Տպագիր 1828.ի – Գրչագիր 1224.ի

### ԷԶ ՏՊ. 171

1. մեծութիւն երկրաւոր = մեծութիւնս երկրաւորս

2. աներկեւղս առնէ = աներկիւղ առնէ

3. տեսանել զբազումս բազում անգամ = տեսանել բազում անգամ

4. խնայեցին զանգիտելով իբրև զանարի, զոլով վատասիրտք = խնայելով իբրև զանարի վատասիրտս

5. յոտարութեան = աւտարութեան (*)

6. զայս ամենայն անցս = զայն ամենայն անցս

### 172

7. միաբան կալ ընդ Աստուծոյ = միաբանեցան ընդ Աստուծոյ

8. մի՛ գերի եղջեն. և ամենայն երևելի մեծութեանս = մի գերեացին, և քան զամենայն երևելի մեծութիւն

9. համարեցան ընտրեալ ի միտս իւրեանց։ Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ = համարեցան ի միտս իւրեանց, և զուրացութեան մեծութիւն չար համարեցան. և զմահն որ վասն Աստուծոյ

10. կենդանութիւն, և ծառայել = կենդանութիւն, ծառայել

ազատութիւն կենաց իւրեանց = յազատութիւն իւրեանց

11. ընդ Աստուծոյ գիտից։ Որպէս յայսմ = ընդ Աստուծոյ գիտացին։ Որպէս եւ յայսմ (**)

զի զնոյն = զնոյն

12. աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց = իւրոյ աշ-

---

1. Բ. Ե։
2. Գ։
3. Բ. Գ. Դ. Ե. [տեսանելէն վերջ չունին մնացեալը]։ — Ծ. Երեք օր. տեսանել բազում անգամ։
4. Բ. Ե. խնայեցին զանգիտելով իբրեւ. և այլն։ — Գ. Դ. (խԶԻ) անարի վատասիրտք։ — Է. (խԶԻ) անարի զոլով վատասիրտք։
5. Ա. Բ. Ե։
6. Ա. զայն անցս։
7. Ա. — Ե. միաբանեալ ընդ Աստուծոյ։
8. Բ. Ե. Ծ. Երկու օր։ — Ա. մի՛ գրեսցին, և քան զամենայն երևելի մեծութիւն։ — Գ. Դ. մի՛ գրել ի մեծութեանս։
9. Ա. համարեցան ընտրել ի միտս իւրեանց. և զուրացութիւն մեծութեան չար. և այլն։ — Բ. Ե. համարեցան ընտրել ի միտս. և այլն։ — Գ. Դ. (ՀԸԻՄԻ) և զուրացութիւնն մեռելութիւն վարկան։ — Ծ. Երկու օր. և զուրացութեան մեծութիւն չար համարեցան։
10. Ա։
11. Ծ. Երկու օր։ — Բ. Ծ. Երկու այլ. ընտանի Աստուծոյ գիտացին. որպէս և յայսմ։ — Ե. (չունի և.)։ — Գ. Դ. Ծ. Երկու օր. ընտանութիւն ընդ Աստուծոյ գիտացին. որպէս յայսմ։

(*) Հոս կը սկսի Ա. օր.ը։
(**) Հոս կ'ընդհատի Ա. օր.ը։

digitised by A.R.A.R.@

խարհին, ոչ թերահաւատեաց տկարու-
թեամբ

13. զբազմաց այլոց եւս զերկմտութիւն == զբազմում այլոց երկմտութիւնն

14. միաբանեալք էին == միաբանք եին

15. զզօրսն իւր, քանզի ինքն իսկ բըռնացեալ == զզաւրս իւր, քանզի դեռ իսկ ինքն բռնացեալ

16. որ ոչ քակեցան == որք ոչ քակեցան

և անհնայն... (մինչև) ի տեղւոջն == (չունի)

Ներշապուհ == Մերշափուհ

Խորխոռունի == Խոռխոռունի

20. և Արտակ պալունի, և Վահան ամատունի և գունդն == և Վաչան ամատունի և Արտակ պալունի, և գունդն

գնթունի == քնթունի

և կարէն սահառունի, և Հմայեակ դիմաքսեան == (չունի)

և Ներսեհ == Ներսեհ

173

17. զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի == զեղբարս կամ զորդիս ի տեղիս (*)

18. զի դեռ ևս == քանզի դեռ ևս

19. պատերազմին եկեալ հասանէին == պատերազմի հասանեին (**)

174

21. ընձայացի և Այրուկ սղ'կունի == ընձայունի և Այրուկն սղկունի

22. արծրունեացն == արծրունի

23. Շահ ախոռապետն == Շահոռապետն

24. և Խուրս սրուանձտեաց, և քո-

---

12. Բ։ — Ե. իւրոյ աշխարհին, ոչ ինչ թե-րահաւատեաց, և այլն։ — Ծ. Երկու օր. թերա-հաւատեաց տկարութեամբ։

13. Բ. Գ. Ե. զբազում այլոց ևս երկմտու-թիւն։ — Գ. զբազմաց այլոց (ԵՆ)։

14. Բ. Ե։ — Ծ. Երկու օր։

15. Բ. Գ. Դ. Ե. զզօրս իւր, քանզի դեռ իսկ ինքն բռնացեալ։ — Ծ. Երեք օր. իսկ դեռ բռնացեալ։ — դեռ իսկ ինքն։

16. Գ. Դ. Ե. որ ոչ քակտեցան։

17. [Գրչագրին հետ նոյն կ'երևի Ա. օր.ին այս կտորն, վերջինոյն տողին պարունակութենէն ու շարքէն դատելով]։ — Բ. Գ. Դ. Ե. զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղիս։

18. Ա. Ե։

19. Ա։ — Է. պատերազմի եկեալ հասանէին։

20. Բ. Ե. և Արտակ Պալունի և Վահան ամ-տունի և Գիւտն։ — Գ. Դ. (ԵԱՊԵՎԱ) և գունդն։ — Ծ. Մի օր. գիւտն։

21. Բ. ընձային և Այրուկ ոչկունի։ — Գ. Ընձայաին [չունի այլ]։ — Դ. Ընձայտին [չունի այլ։ Ասոր և նախորդին մէջ տ և ա չփոթու-թիւն մ'ըլլալը կը տեսնուի։] — Ե. (ԸԵԱ) ող-կունի։ — Զ. Է. Ընձայացի (ԵԱ) Սլկունի։ — Ծ. Մի օր. ընձային. Մի օր. ընձայունի։

22. Ծ. Մի օր.։ — Բ. Ե. արծրունեաց։ — Գ. Դ. արծրունեայ։

23. Է։ — Բ. Գ. Դ. Ե. Շախուռապետն։ — Ծ. Յօրինակին. Շահ ախոռապետն [Բայց իր նոյն հրատարակութեան շարքին մէջ գրած է Շահ խոռապետն]. Իսկ այլ չորս օրինակք Շախու-ռապետն կամ Շահոռապետն, ըստ ձիչդ գրու-թեան հնագիր մատենից գրելի են՝ Շա'խուռա-պետն կամ Շա'հոռապետն։ [Է. օրինակին ե-տևի թիւ 2 ծանօթութեան մէջ այսպէս կը պար-զաբանէ փորթուգալ փաշա՝ Շահոռապետ բառին ճշդութիւնը. «Շախուռապետն արքունի. այլ ըն-թերցուած՝ Շախուռապետն կամ Շահախոռա-պետն։ Այժմ համօրէն տպագիրք դնեն՝ Շահ՝ խոռապետն. և կը մեկնուի՝ Շահ՝ յատուկ անուն և խոռապետ՝ կուրապաղատ, իշխան յարքունիս, փոխանորդ արքայի, զուցէ պարսկերէն խօս բա-ռէն կազմեալ, որ թարգմանի պաշատ, արքունի տուն։ Սակայն եթէ այդպիսի պաշտօնեայ մը ըլլար, գահնամակաց մէջ նշանակուած պէտք էր ըլլալ։ Արդ խոսրովայ գահնամակին մէջ կը տես-նենք Շահոռապետք. վասն որոյ ուղիղ չերևիր մեզ բաժանել զանունդ յերկուս։ — Բայց ի՞նչ էր շահոռապետին պաշտօնը. համանօրէն շահր և պետ բառերու բարդութիւն մի է և կը նշա-նակէ «քաղաքապետ»։ Եւ թէպէտ նոյն գահնա-մակին մէջ կը տեսնենք և առանձինն «Քաղա-քապետք». այսու ամենայնիւ մարթ է կարծել թէ Շահոռապետն արքունի թագաւորանիստ քաղաքին իշխանն էր և նոյն ընդ քաղաքապե-տին արքունի, որ Վռամայ գահնամակին «քա-ղաքապետքն» միւս մեծամեծ քաղաքաց իշխանքն էին»]։

24. Բ. Գ. Դ. Ե. և Խուրս սուանձտեայ և Քողեանքն։ — Ե. (ԵԽ) սրուանձտեայ (ԵՔ)։ — Ծ. Մի օր. սուանձտեայ. Այլ օր. Խուրսով ընձ-տացի. Մի օր. քաղեանքն։

(*) Հոս կը սկսի Ա. ը, բոլորովին թերատ և անորոշ։

(**) Կ'ընդհատի Ա.ը՝ մինչև յաջորդ էջին վրայ։

digitised by A.R.A.R.@

*զեանքն* = *և խոսրով ընձառացի, քովհանքն*

25. *Որքա ամենեքեան համագունդք հա֊սանէին* = *նոքա ամենեքեան հասանեին*

*հանդէս համարուն վաթսուն և վեց հա֊զար այր ընդ հեծեալ* = *հանդէս համա֊րու վաթսուն և վեց հազար ընդ հեծեալ*

26. *Սուրբքն Յովսէփ և Ղևոնդ երէց, և բազում և այլ* = *սուրբն Յովսէփ և Ղևոնդ երէց, բազում և այլ*

*և ես բազմագոյն պաշտօնեայք* = *ես բազում պաշտաւնեայք*

*մարմնական համարէին* = *մարմնական ինչ համարեին*

27. *այլ հոգևոր առաքինութեամբ ցան֊կային* = *այլ հոգևո՛ր առաքինութիւն. ցան֊գային*

*ընդ զօրսն* = *ընդ զաւրս*

175

*և է ուրեք՝ զի նոքա մեզ* = *և է զի նոքա մեզ*

28. *և միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք* = *և միանգամ ա՛յն ամենայն մարմնոյ եին պարծանք*

29. *անցաւոր թագաւորի* = *երկրաւոր թագաւորի*

*վատանուն յաշխարհի* = *վատանուն յերկրի*

*և ի մահկանացու* = *ի մահկանացու* (*)

30. *Եւ մեք իսկ աւասիկ* = *իսկ մեք ահաւասիկ*

31. *առեալ ինքն և պարգևս* = *առեալ պարգևս*

32. *զքաջութիւնսն* = *զքաջութիւն*

33. *զպարգևսն զբազումս* = *զպարգևս բազումս*

34. *Վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք, ո՛րչափ ևս առաւել* = *վասն մահկանացու թագաւո֊րին զայս արութիւնս կատարեաք, ևս ա֊ռաւել*

176

*որ ոչ ևս ելանիցեմք ի նմանէ* = *որ ոչ ելանելոց եմք ի նմանէ* (**)

35. *ո՛վ քաջ նիզակակիցք* = *քաջ նի֊զակակիցք*

36. *լաւագոյնք էք* = *լաւագոյնք են*

*և զահու ի վեր* = *և զահիւ ի վե՛ր*

*ձերով կամօք* = *ձերով կամաւ*

37. *և զօրագլուխ* = *և զաւրավար*

38. *բանք իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունց* = *բանքս իմ մեծամեծացդ և փոքունցդ* (***)

39. *առն մահկանացուի* = *մահկանա֊ցուի առն*

---

25. Բ. Գ. Դ. Ե. *Նոքա ամենեքեան համա֊գունդ հասանէին։*

26. Ե։ — Բ. Գ. Դ. *սուրբքն և այլն, էրեց և այլն։*

27. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. *այլ հոգևոր առա֊քինութեան. ցանկային։* — Ծ. Երեք օր. *առա֊քինութեան.* Մի օր. *առաքինութիւն։* [*Ամենէն ուղիղը կ'երևի առաքինութեանը. Գրչագրինն ալ ուղիղ ձև մ'է թէպէտ, բայց կրնայ նաև սխալ ընթերցմամբ կամ անուշադրութեամբ գրչագրո֊ղը չեղած ըլլալ նախորդ ձևէն*]։

28. Բ. Գ. Դ. Ե. *և միանգամայն այն ա֊մենայն մարմնոյ պարծանք էին։*

29. Զ. Է. *անցաւոր թագաւորին։*

30. Ա. ..*մեք ահաւասիկ։* [*Գրչագրիս ընկեր կ'երևի այս ձևը*]։

31. Ա։ — Բ. Ե. *առեալ է պարգևս։* — Գ. Դ. (Ա) *ինքն* (Պ)։

32. Ա. *զպարգևսն։*

33. Ա. *զքաջութիւն։* — Բ. Գ. Դ. Ե. *զպար֊գևսն բազումս։*

34. Ա. Ե. *Վասն մահկանացու հրամանա֊տուին և այլն, որչափ ևս առաւել։* — Ծ. Մի օր. *թագաւորին։*

35. Բ. Գ. Դ։ — Ե. *քաջ նիզա[կա]կիցք*

36. Բ. Գ. Դ. Ե. *Լաւագոյն են։*

37. Բ. Գ. Դ. Ե։ — Ծ. *այլք՝ զօրավար։*

38. Ա. *բանքս իմ ի լսելիս... մեծացդ* [*ան֊շուշտ մեծամեծացդ*] *և փոքունց։* — Բ. Գ. Դ. Ե. *բանքս իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունց։* — Թ. (ԲԻԻԼՄ) *և ի փոքունց։*

39. Գ. Դ. *առնն մահկանացուի։*

(*) Ա. *օր.ը կը սկսի հոս։*

(**) Ա. *օր.ը ասկից կ'ընդհատի։*

(***) *Հոսկից կը սկսի նորէն* Ա. *օրինակը և կը շարունակուի մինչև յաջորդ էջին վրայ։*

digitised by A.R.A.R.@

177

40. զզօրութիւն նոցա = զզաւրութիւնս նոցա

41. յարութիւնս քաջութեան = յաւրութիւնս քաջութեան

42. տղայ անպիտան. իբր այն ևթէ ի վերինն երեսս = տղայ և անպիտան. իբրև այն թէ ի վերին երեսս (*)

ամբարշտութեանն = ամպարշտութեանն

43. բայց ի ծածուկ գխորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, ո՛րպէս = բայց գծածուկս սրտից մերոց Տէր ինքնին վկայէ մեզ քէ որպէս

44. ինքնին իսկ գիտէք, վասն սիրելեաց մերոց՝ որ ի մեծի նեղութեան էին, հնարս խնդրէաք վասն յանդորր հանելոյ = ինքնին վկայէք զի վասն սիրելեաց մերոց որ ի մեծ նեղութեան եին, հնարս խնդրեաք յանդորր հանել

45. օրհնացն․ Եւ իբրև նոցա ոչ ինչ կարացաք օգնել = աւրհնացն զոր անաւրէն իշխանն կամէր հանել ի մէնջ․ իբրև նոցա՛ ինչ ոչ կարացաք աւգնել (**)

178

46. ընդ մարդկան փոխանակիցեմք = ընդ մարդոյ փոխանակեացուք

47. և զզօրսն = զզաւրսն

48. կռապաշտութեանն = կռապաշտութեան

49. զանօրէն հրաման թագաւորին եղ-

---

40. Ա։ — Գ. Դ. զօրութիւն նոցա։

41. Ա. ի յարութիւնս քաջութեան։ — Բ. Գ. Դ. Ե. յարութիւն քաջութեանս։ — Ծ. Զօրս օր. յարիութիւնս (կամ) յարութիւն։

42. Ա. տղայ և ան… [անշուշտ՝ անպիտան] իբրև այն եթէ ի [մնացեալը ընդհատուած]։ — Բ. Գ. Դ. Ե. տղայ անպիտան. իբրու այն. և այլն։

43. Բ. Ե. բայց ի ծածուկ խորհուրդս մեր՝ Տէր ինքնին վկայ է մեզ, թէ ո՛րպէս։ — Գ. Դ. (ԲԻԾԻՄ) Տէրն (ԻՎԷՄԹՈ)։ — Ծ. Երկու օր. գծածուկս սրտից (կամ) խորհրդոց մերոց։

44. Բ. Գ. Դ. Ե. ինքնին իսկ գիտէք վասն սիրելեացն մերոց, որ ի մեծ նեղութեանն էին. և այլն։ — Ծ. Այլք. խնդրեաք յանդորր հանել։

45. Ա. [Մեր գրչագրին մէջի ընդգծեալ յաւելուածը՝ կ'երևի նաև այս Ա. օր.ին մէջ՝ պակասաւոր ձևի տակ. ահա այսպէս կը ներկայացնէ զայն հրատարակիչը]. զոր ..... ա իշխանն կամ ... (նիկ?). ի մէնջ, իբրև նոցա ինչ ոչ կարացաք աւգնել։ [Որովհետև ճիշդ այս պատառիկով է որ կը սկսի հրատարակել Հ. Յ. Աստուրեան իր ձեռագրին Դ. թուղթը, ուստի անոր դիմաց բաղդատութեան կը դնէ «(Զի նոքօք հանդերձ մարտ եղեալ կռուեցուք ընդ անօրէն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն)» կտորը։ Ու զայս, ինչպէս կը տեսնենք, փակագծով մը կը զատէ յաջորդներէն. իսկ վարը նոր պատառիկին վրայօք սա ծանօթութիւնը կը դնէ. «Այդ երեք տողերը կը պակսին տպագրին մէջ, որ ունի փակագծի մէջ առնուած կտորը» Ինչ որ կ'երևի՝ Հ. Յ. Աստուրեան տարակուսած է, վասն զի իր պատառիկները կը բաղդատէր յաւելուածս չունեցող տպագիրներէն մէկուն հետ, ինչպէս էր Միք. Փորթուգալ փաշայինը։ Ուստի նմանութեան նմոյշ մը տեսնելով երկու կտորներուն մէջ, զոր օրինակ երկուքին իշխան բառերը՝ փակագծի մէջ կ'առնէ, կերպով մը այլափոխուած համարելով երկու համեմատութիւնները. անշուշտ մին կամ միւսն աղաւաղուած։ Արդ կը տեսնուի որ նոյն իր հրատարակածը շարունակութիւն է փակագծեալ կտորէն ետքը, ինչպէս որ կը ցուցնէ մեր հրատարակած գրչագիրը և, վարը, 1838ի տպագրութեան ծանօթութիւնը, զոր համեմատութեան առած ենք։ Եւ որովհետև մեր գրչագրին հետ ընդհանրապէս համընթաց գտանք Հ. Աստուրեանի հրատարակած թղթերը, ուստի շատ հաւանական է մեզ կարծել՝ որ իր գրչագրին Դ. թուղթը յաւելուածէն առաջ ունեցած պիտի ըլլայ տպագրին փակագծեալ կտորն ալ]։ — Ծ. Երկու օր. յաւելուծ. զոր անօրէն իշխանն կամէր հանել ի մէնջ։

46. Ա. ընդ մարդկան փոխանակեացուք։ — Բ. Գ. Դ. Ե. ընդ մարդոյ փոխանակեմք։

47. Բ. Գ. Դ. Ե։ — Ա. զզաւրսն։

48. Ա։

49. Ա. և զանաւրէն թագաւորին զհրամանն. և այլն։ — Բ. Գ. Դ. զանօրէնն հրաման թագաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք. յենացեալ։ [Մեզի աւելի ճիշդ կ'երևի անօրէն ածականը թագաւորին յատկացնել քան հրամանին, քանի որ մեր այս հին օրինակներն իրենց դիրքով աւելի կ'ամրացնեն ըսածնիս, որքան որ մեծ տարբերութիւն մը չըտեսնուիր թագաւորին անօրէն հրամանը կամ անօրէն թագաւորին հրամանն ըսելուն մէջ]։

(*) Կ'ընդհատի նորէն Ա. օր.ը մինչև յաջորդ սիւնը։

(**) Ա. օր.ը կը սկսի դարձեալ հոսկից և կը շարունակէ մինչև էջ 386



digitised by A.R.A.R.@

ծաք ապականեցաք, զխոովութիւն ծովուն ցածուցաք, լեռնացեալ = և զանաւրէն թագաւորին հրամանսն եղծաք, զխռովութիւնն ցածուցաք, լեռնացեալ

50. բարձրաղէզ փրփուրն սպառեցաւ = բարձրաղէզ փրփուրն պայթեաց

51. որ ի վերայ ամպոց որոտայր, ներկուն եղեալ՝ քան զսովորական բնութիւնն ի վայր զտաւ ընդ մեզ խօսելով = որ ի վերայ ամպոց որոտայր նկուն եղեալ գտաւ ի ներքոյ քան զսովորական բնութիւնն (չիք «ընդ մեզ խօսելով»)

52. հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն = հրամանաւ զմեզ կամէր կորուսանել և կատարել զչարութիւնն (*)

սրով կոուփ։ Որ իբրև = սրով կոուփ ընդ մեզ. որ իբրև

179

չկարէ շրջել = ոչ կարէ շրջել

ոչ այլ կարասցէ մինչև = ոչ այլ կարասցէ շրջել մինչև

53. հիմունք սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան = հիմունք նորա հաստատեալ են ի վերայ վիմին հաստատութեան (**)

54. և ոչ հողմք շնչէն և ոչ հեղեղս յարուցանեն = և ոչ հողմք շարժեն, և ոչ հեղեղս յարուցանեն

55. այլ հաւատով յերկինս եմք շինեալ. ուր ոչ ոք կարէ = այլ հաւատովք յերկինս եմք շինեալք, ուր ոչ կարէ

56. որ ոչ երբէք մոռասցի զգործս նահատակութեան ձերոյ = որ ոչ երբեք մոռասցի զգործ նահատակութեան ձերոյ

57. մեզ այս մեծապէս է = մեզ այս առ մեծապէս է

58. և զօրութիւն Աստուծոյ = և զաւրութիւնն Աստուծոյ

59. օրհնացն՝ պարծանս անձանց ժառանգեցաք, և զքաջ անուն ազգատոհմին մերոյ թողաք եկեղեցւոյ = աւրհնացն պարծանք անձանց ժառանգեցաք. զքաջատոհմ ազգի և եկեղեցւոյ թողաք (***)

60. որ պահի խրախճանչիւր ումեք ի մէնջ = որպէս խրախճանչիւր ումեք ի մէնջ

180

61. ըստ գործոց առաջարկութեան = ըստ գործոց յառաջարկութեան

62. եթէ մեք մեռանիցիմք = եթէ մեք մեռանիմք

---

50. Ա. Բ. Ե։ — Գ. Դ. բարձրացեալ փրփուրն սպառեցաւ։ — Ծ. Մերն և մի այլ. բարձրացեալ։ Երեք օր. պայթեաց։ [Ըստ վկայութեան այս հին օրինակներուն շատ հաւանական կ'երևի հարազատ բառն համարել պայթեացը քան սպառեցաւը։ Մանաւանդ Եղիշէի բանաստեղծական գրչին արժանավայել է փրփուրին համար պայթեաց դնելը քան սպառեցաւը]։

51. Ա. [կիսատ և թերի]. Որ ի վերայ ամ... որոտայր նկուն... եալ քան զսո։ — Բ. Գ. Դ. Ե. [կ'աւելցնեն նաև մեր գրչագրին ծայրը] ընդ մեզ խօսելով։ — Ծ. Այլք. գտաւ ի ներքոյ։

52. Բ. Գ. Ե. հրամանաւ կամէր զմեզ կորուսանել. և այլն։ — Ծ Երեք օր. կամէր զմեզ կորուսանել և կատարել։

53. Ա. հիմունք նորա հաստատ... են վերայ վիմին հա... ատութեան։ — Բ. Ե. հիմունք նորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան։ — Ծ. Երկու օր. նորա հաստատեալ են.. վիմին հաստատութեան։

54. Ա. և ոչ հողմք շարժեն և ո. հեղեղս յարուցանեն։ — Ծ. Երկու.. օր. շարժեն։

55. Ա. այլ հաւատո. յերկինս. և այլն։ — Բ. Գ. Դ. Ե. Է. այլ հաւատովք և այլն. ուր ոչ ոք կարէ։

56. Ա. որ ոչն երբէք մոռասցի զգործ նահատակութ. ա. ձերոյ։ — Բ. Գ. Դ. Ե. որ ոչ երբէք մոռասցի զգործ նահատակութեանս։

57. Ա։

58. Ամենայն օրինակք։

59. Ա. աւրհնացն պարծան. անձանց և այլն։ Դ. [«անձանց»ին տեղ ուրիշ բառի մը մասնիկը կ'երևի որ կորուած է եզերքէն]

60. Բ. Ե. որ պահի խրախճանչիւր ումեք ի ձէնջ։

61. Բ. Գ. Դ. Ե. ըստ առաջարկութեան գործոց։

62. Բ. Գ. Դ. Ե։

(*) Հոսկից կ'ընդհատի Ա. օր.ը մինչև վարը։

(**) Հոս կը սկսի Ա. օր.ը և կը շարունակուի մինչև վարը։

(***) Հոս կը վերջանայ բոլորովին Ա. օր. ը։

digitised by A.R.A.R.@

63. *երկնաւորքն են ցանկացեալ* = *երկնաւորք են ցանգացեալ*

64. *Եւ զի այս պարգեք ոչ ամենեցուն է անկ, այլ որում պատրաստի ի բարեբար տեառնէն* = *և այս պարգևս ոչ ամենեցուն անզ, որում պատրաստին ի բարեբար տեառնէ մերմէ*

*անդէն առաւելան շնորհքն Աստուծոյ* = *և՛ս առաւելան շնորհքն Աստուծոյ*

*որպէս և* = *որպէս*

*մարդկան ամբարշտեալք* = *մարդկան ամպարշտեալք*

*մարդկան և հրեշտակաց և հօրն* = *հրեշտակաց և մարդկան և հաւրն*

65. *Զի որ օր լուան ապաքէն զմէնջ մարդիկ* = *որ աւր լուան զմէնջ ապաքէն մարդիք*

181

66. *և մահ դատնութեան* = *մահ դատնութեան*

*և ծառայքն մեր* = *և ծառայք մեր*

*և հեռաւորաց* = *և հեռաւորացն*

*քանզի ոչ էին* = *քանզի ոչ լինէին*

*առեալ անդադար աշխարհէին զմեզ* = *առեալ ողբային զմեզ անդադար*

67. *խօսէին զմէնջ։ Եւ որ մեծն քան* = *խաւսէին զմէնջ. և որ մեծն է քան*

*մարդիկ յերկրի* = *մարդիք յերկրի*

68. *Եւ ահա եկն եհաս ժամանակ* = *և արդ եկն եհաս ժամանակն*

69. *ի բաց բարձցուք։ Յայնժամ իբրև զթախծեալ սգաւոր՝ յոգի և մարմին էաք տրտմեալք, այսօր զուարթացեալ և զգաստացեալք յերկոսեան* = *ի բաց բարձցուք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ։ Յայնժամ թախցեալ զգաւորք յոգի և ի մարմին եաք, և այս աւր զարթուցեալք և զուարթացեալք յերկոսեանն*

70. *քանզի և զՏէրն բարեբար* = *քանզի զտէրն զբարեբարն*

182

71. *մարտիրոսաց։ Երկեւղ* = *մարտիրոսաց. երկիւղ*

72. *զթերահաւատութիւն* = *զթերահաւատութիւնն*

*խօսեցաւ ընդ ամենայն բազմութեանն* = *խաւսեցաւ ընդ ամենայն բազմութիւնն*

73. *աղքատութեան* = *աղքատութեանն*

74. *յընկերաց* = *յընկերացն*

75. *երիւար՝ երիւար տայր* = *երիվար պիտոյ էր երիւար տայր*

76. *և ըստ պատերազմական կարգին զքաջ արանց զյիշատակարանս հանապազ երկրորդէր* = *և զպատերազմական կարգին զքաջ արանցն զյիշատակարանս հանապազ երկրորդէր*

183

*ի մանկութենէ* = *ի մանգութենէ*

---

63. Բ։ — Ե. երկնաւորք են ցանկացեալ։

64. Բ. և այս պարգեւք. և այլն. որոց պատրաստի ի բարեբար տեառնէն։ — Գ. Դ. և այս պարգեւք. և այլն. են անկ (ՈՊԻԲՏ)։ — Ե. (ԵԱԳ) և այլն. է անկ (ՈՊԻԲՏ)։

65. Բ. Զի որ օր լուան ապաքէն զձէնչ մարդիկ։

66. Բ. Գ. Դ. Ե. և մահ դատնութեան։

67. Բ. խօսէին զձէնջ։ Եւ որ մեծն քան։ — Ե. (Խ) զմէնջ։ և այլն։ —

68. Բ. Գ. Դ. Ե. և արդ. և այլն. ժամանակ։ [Դ. օր.ը եհասը եհաս կը դնէ]։

69. Բ. ի բաց բարձցուք։ Յայնժամ իբրեւ թախծեալ սգաւորք՝ յոգի և ի մարմինն էաք տրտմեալք, և այսօր զարթուցեալք և զուարթացեալք՝ յերկոսեանն։ — Գ. Դ. (ԻԲԲՑԻԹԱ ՑԵԻՄԷՏ), և այսօր զարթուցեալք յերկոսեանն։ — Ե. (ԻԲԲ) Յայնժամ թախծեալ սգաւորք՝ իբրև յոգի (ԵԻՄԷՏԵԱ) զարթուցեալք զուարթացեալք յերկոսեանն։ — Ծ. Երկու օրին. ընդ նմին և երկիւղն փախիցէ։ Երկու օր. զարթուցեալք և զուարթացեալք յերկոսեանն։

70. Բ. Գ. Դ. Ե. քանզի և զբարեբար տէրն։

71. Դ. Ե. Է. մարտիրոսաց։ Երկիւղ։

72. Բ. Գ. Դ. Ե։

73. Բ. Գ. Դ. Ե։

74. Բ։ — Գ. Դ. ընկերացն։

75. Բ. Գ. Դ. Ե. Զ. երիվար, երիվար տայր։

76. Բ. Գ. Դ. Ե. և ըստ պատերազմական. և այլն. զքաջաց արանց և այլն։ — Ծ. Երկու օր. զպատերազմականն։ Երեք օր. զքաջաց արանց։

digitised by A.R.A.R.@

կտակարանաց = կտակարանացն
զքաջ նկարագիրն = զքաջ նկարագիր
77. և յորդառատ բանիւք զելս իրացն իմացուցանէր նոցա = յորդ և առատ բանիւք գիտէր զելս իրացն իմացուցանել նոցա
78. անտիոքացւոց = անտիոքա
79. զայն յուշ = զայն և ա յուշ
80. Մատաթեայ = Մատաթեան
81. բաժանեցան ի միութենէ նորա = բարժանեցան ի միաբանութենէ նոցա
մահուան = մահուամբ
իսկ Մատաթի = իսկ Մատաթիայ

184

բազում ժամանակս = ի բազում ժամանակս
82. զայրուձին կազմէր = զայրուձին գումարէր
83. խաղայր զայր = խաղայր զնայր
84. և եկեալ = եկեալ
85. Ջարաւանդ = Ջարեանդ
86. ի զաւառին զտեղի առեալ նորա, բանակ բոլորէր, փոս = ի զաւառին զտեղի առեալ. և բանակս բոլորէր, փոսս
87. պատնէշ = պատնէշս
88. շերտաւոր = շերտաւորս

89. իբրև զքաղաք ամենայն պատրաստութեամբ։ Գունդ բազում հատանէր = իբրև զքաղաք մի ամուր ամենայն պատրաստութեամբ. գունդս բազումս հատանէր
Զայն իբրև լուան = Զա՛յս իբրև լուան
յազգէն ամատունեաց = յամատունեաց ազգէն
էլ = ելանէր
90. նորա = նոցա
91. հար սատակեաց զբազմութիւն զընդին. և զմնացեալսն ի նոցանէ անդրէն փախստական ի բանակն արկանէր = սատակէր զբազմութիւն զնդին, և զմնացեալսն անդրէն ի բանակն արկանէր

185

այսրէն = անդրէն
92. սօն ուրախութեան մեծ յաւուրն = տաւն ուրախութեան յաւուրն մեծի
դարձեալ միասանգամ ուրացեալն = դարձեալ ուրացեալն
իւրոյ. շրջեցաւ = իւրոյ, որ շրջեցաւ
93. յառաջագոյն ասացաք, նոքօք հրամանաւ արքունի ի պատգամաւորութիւն = յառաջագոյնն ասացաք՝ զի նոքաւք հրամանաւ արքունի պատգամաւորութիւն
94. հաստատէր զքրիստոնէութիւնն ան-

---

77. Բ. Գ. Դ. Ե. և յորդառատ բանիւք. և այլն։ — Ծ. Երկու օր. յորդ և առատ։ Երեք օր. գիտէր զելս իրացն իմացուցանել։
78. Բ. Գ. Դ. Ե. անտիոքոսի։ [Փորթուգալ փաշա Անտիոքացւոց բառին վրայ սա ծանօթութիւնը կու տայ. «Այլ ընթերցուած Անտիոքոսի. երկուքն ալ ուղիղ են. վասն զի Անտիոք մայրաքաղաք էր Սելևկիացւոց իշխանութեան. և Անտիոքոս Եպիփան թագաւոր էր յաւուրս Մատաթեայ (167 նախ քան զՔրիստոս). Եպիփանի յաջորդեց Անտիոքոս Եւպատոր, որոյ ժամանակն է Յուդա Մակաբէ»]։
79. Բ. Գ. Դ. Ե։ — Է. զայլ յուշ [լ ը անշուշտ տպագրութեան սխալ]։
80. Գ. Դ. Մատաթիայ։
81. Բ. Գ. Դ. Ե. բաժանեցան ի միաբանութենէ նորա։
82. Բ. Գ. Դ. Ե. — Ծ. Այլք. գումարէր։
83. Գ. Դ։
84. Բ. Գ. Դ. Ե։
85. Բ. Ե. Զ։

86. Բ. Ե. ի զաւառին զտեղի առեալ. և բանակս բոլորեալ, փոսս։ — Գ (ԻԳՁԱ) և նորա բանակ բոլորէր, փոս։ — Դ. (ԻԳՁԱ) և նոր բանակ բոլորէր, փոս։ — Զ. զտեղի առեալ նորա ի զաւառին՝ բանակ բոլորէր, փոս։ — Ծ. Մի օր. և նոր բանակ։
87. Բ. Ե։
88. Բ. Ե։
89. Բ. Ե։ — Ծ. Մի օր. զքաղաք մի ամուր։
90. Բ. Ե։
91. Բ. հար սատակեաց զբազմութիւն զնդին, և զմնացեալսն ի նոցանէ՝ անդրէն ի բանակն փախստական արկանէր։ — Գ. եհար սատակեաց զբազմութեամբ զնդին, (ԵՁԻՆԱԻԲՓԱ)։ — Դ. եհար սատակեաց զբազմութեամբ. և այլն. անդէն ի բանակն. և այլն։ — Ե. (ՀՍՁԳ), և զմնացեալս (ԻՆԱԻԲՓԱ)։
92. Բ. Գ. Դ. Ե։ — Ծ. Չորք օրինակք. մեծի։
93. Ե. յառաջագոյն ասացաք, նոքօք. և այլն։
94. Բ. Ե. հաստատէր չնորհել զքրիստո-

digitised by A.R.A.R.@

*դրէն ունել = հաստատէր շնորհէր զբրխտանէութիւն անդրէն*

95. *մանաւանդ զսուրբ ուխտ եկեղեցւոյն, որ ոչ էր հեռացեալ = մանաւանդ զի սուրբ ուխտ եկեղեցոյն ոչ էր մեկնեալ*

96. *որպէս = որպէս և*

97. *ի քահանայիցն = և ի քահանայիցն*

98. *հրեշտակացն = հրեշտակացն պարսից։*

186

99. *զհարսն զառաջինս = զհարսն ձեր զառաջինսն*

100. *յիւրաքանչիւր ժամանակս = յիւրաքանչիւր ժամանակի*

101. *ըստ մեղացն = ըստ մեղաց*

*զարարչական զօրութիւնն շարժեցաք ի վերայ մեր ի ցասումն = զարարչական զօրութիւն մեր շարժեցաք ի ցասումն*

*առանց բարեխօսի վրէժ առնուլ = և առանց բարեխաւսի վրէժս առնուլ*

*յազգի մարդկութեանս = յազգիս մարդկութեանս*

102. *տերունեան = տերունոյն*

187

*առ անձումն բազմութեան մարդկային ազգիս = առ անձումն բնութեան մարդկան ազգիս*

*ի փորձութեանն = ի փորձութեան*

*ձեռօք = ձեռաւքն*

103. *վասն այսորիկ և յառակս ընկալաւ = վասն այսորիկ յառակս ընկալաւ*

104. *տեսանէր զաներևոյթ զալուստ որդւոյն, և զըմբռնումն անըմբռնելւոյն և զծնունդն = տեսանէր աներևոյթ զգալուստ որդոյն, և ըմբռնումն անըմբռնելոյն և զծնունդն*

105. *մահակիցք լինել = մահակից լինել*

*ընդ որում մեք մեռանիմք = ընդ որում և մեռանիմք*

106. *երևէր նմա. և տուն թագաւորին եգիպտացւոց ի ծառայութիւն մտանէր նմա, և ակամայ դայեկութեամբ = երևէր նմա, և ակամայ դայեկութեամբ*

188

*ի վերայ եգիպտացւոցն = ի վերայ եգիպտացւոցն*

107. *իսկ ուր աստուածային յայտնութիւնն ի վերայ նորա լինէր = իսկ ուր աստուածային յայտնութիւնն ի վերայ լինէր*

*և վասն սուրբ նախանձուն զոր ունէր = վասն սուրբ նախանձուն որ ունէր*

Հ. Ղ. ՏԱՑԵԱՆ

*Ծարայարեկի*

---

*նեութիւնն անդրէն։ — Գ. Դ. հաստատէր զբրխտանէութիւնն անդրէն։*

95. Բ. *մանաւանդ զի սուրբ ուխտ եկեղեցւոյն, որ ոչ էր հեռացեալ։* — Ե. (ՄՋՍՈ) *եկեղեցւոյն ո՛չ էր հեռացեալ։*

96. Բ. Ե։

97. Բ. Ե։

98. Բ. Ե։

99. Ե։ — Բ. *զհարսն ձեր զառաջինս։* — Գ. Դ. *զհարսն մեր զառաջինս։*

100. Բ. Գ. Դ. Ե։

101. Դ։

102. Բ. Գ. Դ. Ե. *տերունեան։*

103. Գ. *վասն այսորիկ և առակս ընկալաւ*

104. Բ. Գ. Դ. Ե. Ջ. Է. *տեսանէր զաներևոյթ զալուստ Որդւոյն Աստուծոյ, և զըմբռնումն անըմբռնելւոյն և զծնունդն։* –

105. Բ. Գ. Դ. Ե. Ջ։

106. Բ. Ե. *երևէր ի նմա. և տուն թագաւորին եգիպտացւոց ի ծառայութիւն մտանէր նմա, և ակամայ դայեկութեամբ։* — Գ. Դ. (ԵՒՆԵՏԹԵ) *ի ծառայութիւն մտանէր* [*ու և ափ չփոթութեան հետևանք*] (ԵԱԻ)։ — Ծ. Երեք օր. *ի նմա* [*երևէրին քով*]։

107. Ե. *իսկ ուր աստուածային յայտնութիւնն ի վերայ լինէր։*

digitised by A.R.A.R.@